ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽԵԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՁԸ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒՄ

ԱՐՏԱՇԷՍ ՇԱՀԲԱՋԵԱՆ

Ինչպէս գիտենք, Ապրիլի վերջերից սկսուեցին ռազմական գործողութիւնները Արցախի ու յարակից հայկական շրջանների ռազմավարական կարեւորագոյն հենակէտերի վրայ, ինչպէս եւ Հայաստանի սահմանամերձ գօտու երկայնքով: Երեւոյթը նոյնիսկ վերջին երեք տարիների համար անսնախադէպ էր նախ՝ իր մասշտաբներով, ապա՝ հետապնդած նպատակներով, որոնք էին՝ վերջնական հայաթափումը եւ Արցախի՝ Հայաստանին ամենամօտ գտնուող Բերդաձորի ենթաշրջանի, Հադրութի շրջանի սահմանամերձ բնակավայրերի, Արցախի ու Շահումեանի շրջանի անառիկ դարպասները հանդիսացող Գետաշէն-Մարտունաշէն գիւղերի: Երեւոյթն անսնախադէպ էր նաեւ նրանով, որ խորհրդային բանակը դաշնակցեց ու գլխատոր դերակատար եղաւ ազերիական բռնազաւթումներին, գործադրելով իր ռազմական հզօր կարողականութիւնը, մասնակցելով թալանի, բռնաբարութիւնների, ըսպանութիւնների վայրենի ձեռնարկումներին: Այլ դէպքերում բանակի աւելի «համեստ» դերը կայանում էր հայկական կողմի ուժի ամեն մի դրսեւորման չեզոքացման մէջ, որ հնարաւորութիւն էր ընձեռում ազերիներին գործելու ազատօրէն ու սրտապնդուած: Ընդ որում բացայայտ էր նաեւ կայսերապետութեան առաջին դէմքերի անմիջական մեղսակցութիւնն ու ղեկավար դերը փաստօրէն այդ ցեղասպանական ծրագրերի իրականացման խնդրում: Ինչպէս բազմիցս վկան ենք եղել, նմանօրինակ գործողութիւնների նախապատրաստման, իրականացման ու հետքերը կորցնելու ծրագրերում գլխատոր դեր է յատկացում միութենական քարոզչական գրոհային մեքենային, որն այս անգամ եւս երկրորդ ճակատում իր գործը զինուորականներից վատ չկատարեց: Ընդ որում, քարոզչական հակահայ արշաւը ընթացք ստացաւ հայաթափման գործողութեանը զուգահեռ: Այսպէս, Ապրիլի 15ից խորհրդային զօրքը դուրս բերուեց Գետաշէնից, Ապրիլի 24ից արգելուեցին թռիչքները դէպի Գետաշէն եւ դրանով ենթաշրջանի հայաբնակ անպաշտպան գիւղերը յայտնուեցին լիակատար մեկուսացման մէջ, իսկ նոյն ամսի 30ից սկսուեցին ռազմական գործողութիւնները: Կայսերական մամուլը նոյն ժամանակ գնդապետ Բլախոտինի դէմ մահափորձի փաստը թմբկահարելով՝ սկսեց աղմկել. «Հայ բանդիտները լկտիանում են Ղարաբաղում» («Ժամանակ» ծրագիր, 16.04.91թ.): Մի քանի օր անց սկսում է աղմուկը, թէ հայերը ռմբակոծել են Խոջալուն, ադրբեջանական այլ բնակավայրեր, ու այսպէս անընդհատ մինչեւ վերջին՝ Բերդաձորի ենթաշրջանի 4 գիւղերի հայաթափումն ու դրա շուրջ փոթորկուած կրքերի մարումը: Աւելորդ է ասելը, որ իհարկէ որեւէ հաղորդագրութիւն չէր տրւում ազերիների գործողութիւնների մասին, որոնք վերջին ժամանակներում նշուած շրջաններում բաւականաչափ ուժեր կուտակելով, լկտիացել եւ իրենց բռնարարքները ամենօրեայ էին դարձրել՝ յատկապէս Մարտ ամսին Օզալի հետ հանդիպման շրջանակում Գորբաչովի արած այն յայտարարութիւնից յետոյ, թէ. «Ղարաբաղն Ադրբեջանի անբաժանելի մասն է»:

Ակներեւաբար Ռուսաստանի հասարակական կարծիքը «մշակելու» նպատակով Ապրիլի 25ին կենտրոնական հեռուստատեսութիւնը ՆԳՆ ամփոփագիրը ներկայացնող ծրագրով ցուցադրեց ըսպանուած զինուորականի լուսանկար, ասելով, իբր նրան ու շատ այլ զինուորականների սպանել են հայ գրոհայինները: Այնուհետեւ մամուլն ու հեռուստատեսութիւնը բազմիցս ներկայացրին իրենց հորինած սցենարները «հայ գրոհայինների» դաժան, նենգ ու դաւադիր գործողութիւնների նկարագրութեամբ: Իսկ զինուորականների «անաչառ» վկայութիւններով գրոհայինների ձեռքին կային աւտոմատներ, գնդացիրներ, հրթիռներ, զրահամեքենաներ, տանկեր: Եւ ինչպէս վերեւում ասուեց, դրանք այդ օրերին իրենց փողերն յատկապէս ուղղում էին «միամիտ ու խեղճ» զինուորականների վրայ, որոնք ամեն ոռպէ պատրաստ էին հեռանալու «զայրոյթից ու վշտից սեւացած այդ հողից» («Պրաւդա», 13 Մայիսի), եթէ չլինէր երկու եղբայր ժողովուրդներին հայ գրոհայիններից պաշտպանելու «սրբազան պարտքը»: Իսկ գրոհայինները, պարզւում է, Գետաշէնում նոյնիսկ հայերի տներն էին այրում, որպէսզի դրանով խորհրդային բանակի «հրեշտակային» դէմքը սեւացնեն: Մինչ ռազմական գործողութիւների սկսուելը, երբ արդէն բաւականաչափ փրփուր էր բարձրացուել «լկտիացած հայ գրոհայինների» շուրջ, ներկայացուեց նշեալ ագրեսիայի նպատակների պաշտօնական հիմնաւորումը, որ հետեւեալն էր. «Հայ գրոհայինների սանձումն ու զինաթափումը, նրանց խարիսխների ոչնչացումը, անձնագրային ստուգումների անցկացումը»: Ի տարբերութիւն նախադէպերի, այս անգամ հայկական կողմի տեղեկատուական աղբիւրները համեմատաբար աւելի օպերատիւ գործեցին, ներքին ու արտաքին սփիւռքի օժանդակութեամբ ապահովելով համապատասխան հասարակական-քաղաքական արձագանք ԽՍՀՄի շրջանակներում եւ դրանից դուրս: Այս հարցում որոշակի դեր ունէր նաեւ Հայաստանի Գերագոյն խորհրդի նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի Մոսկուայում տուած մամլոյ ասուլիսը ԽՍՀՄ-եւ արտասահմանեան լրագրողների համար: Հայերի այս ուղղութեամբ գործադրած ջանքերի արդիւնքը չեզոքացնելու նպատակով, խորհրդային քարոզչական ինստիտուտը նախաձեռնութիւնը վերցրեց իր ձեռքը, թոյլ տալով բազմազան մամուլի ու տեղեկատուական միւս աղբիւրների կողմից փաստերի գրեթէ ազատ հրապարակում (ինչը մենք ցաւօք միշտ այլ կերպ ենք ընկալում), որն իհարկէ նա կարողանում էր մղել լկտի ու աղաղակող ստի իր փորած հունը: Իսկ այդ ստի տրամաբանութեամբ ստացւում էր, թէ չկայ արցախահայութեան ինքնորոշման պահանջ, այլ կայ հայ գրոհայինների արկածախնդրութիւն, որ ծառայում է Հայաստանի իշխանութիւնների դիրքերի պահպանմանն ու ամրապնդմանը: Արցախը եւ Հայաստանի սահմանամերձ գօտիները լցուած են լաւ զինուած հայ գրոհայիններով, որոնք բռնարարքներ են գործադրում խաղաղ ադրբեջանցիների վրայ, ըսպառնալով ստիպում են արցախահայութեանը չլքելու իրենց բնակավայրերը, ինչը որ վերջիններիս ցանկութիւնն է: Ստացւում է այնպէս, որ Գետաշէնի պէս հայահոծ գիւղի, Մարտունաշէնի, Բերդաձորի, Եղծահողի, Կիրովի բնակիչները ոչ թէ ենթարկուեցին բնօրրանից բռնի տեղահանման ցեղասպանական գործողութեանը, այլ սեփական կամքով, որն արտայայտուած էր նրանց՝ համապատասխան թղթերի տակ ստորագրութիւններով, հեռացան ապահով վայրեր: Տասնեակ անմեղ մարդիկ, որ գերեւարուեցին Գետաշէնից, Բերդաձորից, Հայաստանի գիւղերից իրականում «գրոհայիններ» էին, որոնց, ինչպէս պէտք է «մշակելուց» յետոյ, լուսանկարում էին զէնքը ձեռքներին, ստորագրել տալիս տարբեր թղթերի տակ, յարուցում նրանց դէմ քրէական գործեր: «Ազատամարտ» թերթը Մայիսի 16ի իր համարում ներկայացրել էր գետաշէնցի Սվետա Աբրահամեանին, որի երեխայի վրայ աւտոմատ պահած ստիպել էին նրան ասելու, թէ Գետաշէնի դեպքերի մեղաւորը հայ գրոհայիններն են եւ յետոյ նկարահանուած ժապաւէնը, իհարկէ առանց աւտոմատի ու աւտոմատաւորի, ցուցադրեցին «Ժամանակ» հեռուստածրագրով: Դիւրահաւատ հայերս յատկապէս ոգեւորուեցինք նոր լոյս աշխարհ եկած ռուսական հեռուստածրագրի հաղորդագրութիւններով, առանց մեզ հարց տալու, թէ ինչող կիսաճշմարտութիւնները, որոնք շատ դէպքերում հակակշռւում էին զինտրականների կամ ազերիների ելոյթներով, արդեօք ՌԽՖՍՀի ժողովրդավարական քաղաքականութեան արդիւնքն են, թէ՞ ծառայում են Գորբաչովի հետ հակամարտ ելցինի անձնական շահերին: Հայութեան հակակայսերական աճող տրամադրութիւնները փորձ չի՞ արւում փոխարինելու «կայսրութեան հետ կապ չունեցող» ժողովրդավար Ռուսաստանի նկատմամբ սիրով: Եւ արդեօ՞ք խորհրդարդածութիւնների տեղիք չի տալիս այն փաստը, որ ռուսաստանեան ծրագրի ցուցադրած հաղորդումները շատ դէպքերում նոյն «Ժամանակ»-ի, «գիշերային հեռուստալուրերի» ռեպորտաժներն էին: Երբ յատկապէս մամուլը նորից սկսեց իր բթամիտ «իրաւական» հիմնաւորումները խորհրդային սահմանների իրաւական անձեռնմխելիութեան եւ նման ցնդաբանութիւնների շուրջ, ինչո՞ւ նոյն ռուսական հեռուստածրագիրը կամ ռուսական կայսերապետական մարմաջով չտառապող որեւէ տեղեկատուական աղբիւր չփորձեց վերջապէս խորանալ խնդրի էութեան եւ նրա պատմական արմատների մէջ: Մի բան էլ ըմբռնենք, որ ողբերգութեան աւարտից յետոյ, երբ Արցախը մեծապէս մեկուսացուեց Հայաստանից, ում են պէտք կոկորդիլոսի արցունքները, որոնք նախատեսուած են բացայայտ գենոցիդի փաստը կոծկելուն եւ ոչ մի գործնական քայլի չեն բերում: Մենք, որ այնքան յոյսեր էինք կապում «Ստատուս քուոյի» փաստի հետ, բթամտերս ծծելով Կայսրութեան քաղաքականութիւնն էինք Արցախի հարցում զուշակում, ռուսական լրատուական աղբիւրներում հանդիպեցինք բազմաթիւ թափանցիկ ակնարկների ագրեսիայի իրական դրդապատճառների մասին, որոնցից մի քանիսը ներկայացնենք այստեղ. «Հայաստանի անկախացման կուրսի լոյսի տակ Ղարաբաղեան կոնֆլիկտը քիչ այլ կերպ է դիտւում: Սա արդէն պարզապէս «մերոնքականների» հետ ներքին «տարաձայնութիւններ» չեն: Հայաստանի հաւակնութիւնները Ղարաբաղի նկատմամբ վեր են աճում տարածքային հաւակնութիւնների (իսկ Հայաստանի Գերագոյն խորհրդի որոշումը Արցախի Հայաստանին վերամիաւորման մասին ոչ ոք չեղեալ չի յայտարարել) մէկ այլ պետութեան: Ներկայ իրավիճակում միութենական պայմանագիրը կնքելու պատրաստ Ադրբեջանը եւ Ղարաբաղը, որպէս նրա տարածքի մաս, «մերոնք» են այդ բառի նեւզորովեան իմաստով, իսկ Հայաստանն արդէն «մերոնք» չեն: Եւ միշտ կարելի է վկայակոչել այն, որ իւրաքանչիւր պետութեան պարտականութիւնն է պաշտպանել առաջին հերթին իր բնակչութեանը: Իսկ անջատման կուրսը մեծապէս նուազեցնում է Հայաստանի հնարաւորութիւնները, ազդելու Ղարաբաղեան իրադարձութիւնների վրայ, ինչպէս եւ ընդհանրապէս մասնակցելու խնդրի քննարկմանը»:

Քիչ ներքեւում ասւում է. «Հայաստանի Խորհրդարանի որոշումը կոմկուսի գոյքի ազգայնացման մասին հազիւ թէ նպաստէր Կրեմլի հետ յարաբերութիւնների նորմալացմանը: Գետաշէն եւ Մարտունաշէն գիւղերի գրաւումից 5 օր յետոյ Երեւանում դեսանտ իջեցուեց, որը հսկողութեան տակ առաւ պաշտպանութեան նախարարութեանը պատկանող մի շարք օբիեկտներ, այդ թւում այստեղ տեղակայուած ուղղաթիռային ստորաբաժանումը: «Ամփոփագրեր մարտի դաշտից: Նովոյէ վրեմյա, թիւ 19»: Իհարկէ, պաշտօնական աղբիւրները չեն կարող բացայայտ յայտարարել, թէ ինչի դէմ է ուղղուած հարուածը: Կապելով իրավիճակի կայունացումը ապօրինի զօրամիաւորումների գոյութեան հետ, մասնաւորապէս այս դէպքում Գորբաչովի բերանով, Մոսկուան ներկայացնում է իր պայմանը. «Իրավիճակի նորմալացման դէպքում Ինքնավար մարզի կարգավիճակը կարող է հագենալ նոր բովանդակութեամբ՝ երկրում կատարուող փոփոխութիւնների հաշուառմամբ (Ռուսաստանի «Լուրեր» հեռուստածրագիր, 22.05.91թ.):

Ինչպէս ընդունուած է նման դէպքում ասել՝ մեկնաբանութիւններն աւելորդ են:

Այսօր կարող ենք խօստովանել, որ կայսրութիւնը վերջին մեկուկէս ամսուայ ընթացքում կատարուած դէպքերի ժամանակ յաղթեց մեզ, ինչպէս առաջին, այնպէս էլ երկրորդ ճակատում: Եւ ծիծաղելի է ընդհանրապէս նրա հետ չափուելը, ինչպէս ռազմական, այնպէս էլ քարոզչական մարզում: Սրանից, ուզես թէ չուզես, բխում է ժողովրդական այն իմաստութիւնը, որ խորհուրդ է տալիս ոտքերը վերմակի չափով մեկնել: Բայց սա արդէն այլ խօսակցութիւն է, որ այլ առիթով պէտք է խօսուի: